ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 318

03 հուլիսի 2025 թվականի N _Ա

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N 101 Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածը, «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածը և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10–ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919–Ն որոշման 3–րդ և 26–րդ կետերի

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել՝

1) «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարների հնարավոր փլուզման դեպքում հնարավոր իրավիճակի աղյուսակը»՝ համաձայն N 1.1 հավելվածի.

3) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի բնակավայրերում երկրաշարժի ուժգնության աղյուսակը»՝ համաձայն N 1.2 հավելվածի.

4) «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կառավարման սխեման»՝ համաձայն N 1.3 հավելվածի.

5) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի ղեկավար կազմի կապի կազմակերպման և ազդարարման սխեման»՝ համաձայն N 1.4 հավելվածի.

6) «Ուժեղ երկրաշարժի դեպքում հետախուզության կառավարման սխեման»՝ համաձայն N 1.5 հավելվածի.

7) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի փրկարարական և վթարավերականգնողական ուժերի ու միջոցների հաշվարկը՝ համաձայն N 1.6 հավելվածի.

8) «Ուժեղ երկրաշարժի դեպքում հետևանքների վերացման պլան–ժամանակացույցը»՝ համաձայն N 1.7 հավելվածի.

9) «Ուժեղ երկրաշարժի դեպքում ինժեներական տեխնիկայի հաշվարկը»՝ համաձայն N 1.8 հավելվածի.

10) «Ուժեղ երկրաշարժի դեպքում բժշկական ապահովման ուժերի հաշվարկը»՝ համաձայն N 1.9 հավելվածի.

11) «Ուժեղ երկրաշարժի դեպքում տուժած բնակչության և փրկարարական կազմավորումների սննդով ապահովման հաշվարկը»՝ համաձայն N 1.10 հավելվածի.

12) «Ուժեղ երկրաշարժի դեպքում տուժած բնակչության՝ հագուստով և առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովման հաշվարկը»՝ համաձայն N 1.11 հավելվածի.

13) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի անօթևան մնացած բնակչության տարահանման և կացարաններով ապահովման հաշվարկը»՝ համաձայն N 1.12 հավելվածի:

14) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի կապի կառավարման սխեման»՝ համաձայն N 1.13 հավելվածի.

15) «Ուժեղ երկրաշարժի դեպքում մարզի տրանսպորտային միջոցներով ապահովման կազմակերպությունների ցանկը»՝ համաձայն N 1.14 հավելվածի.

16) «Սյունիքի մարզի բնակավայրերի ցանկը»՝ համաձայն N 1.15 հավելվածի:

2. Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 10–ի N 919–Ն որոշման 26–րդ կետով, ինչպես նաև սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Ուժը կորցրած ճանաչել «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» ՀՀ Սյունիքի մարզպետի 2012 թվականի հուլիսի 26-ի N 101 Ա որոշումը:

Recoverable Signature

Ստորագրող
ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
3712800290

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

03 հուլիսի 2025թ.

ք. Կապան